Digitally signed by MEJINYAN MARINE 6501600308
Date: 2023.03.29 12:27:30 GST

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Մ. Մեջինյան

«01» սեպտեմբեր 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տավուշի մարզ քաղաք Դիլիջան_

Մարզ համայնք

<<Դիլիջանի № 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ IXզ

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Գյոզալյան Լաուրա Կամիսարի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) _ IXգ դասարանում սովորում է 27 աշակերտ՝ 12 աղջիկ, 15 տղա: Աշակերտները

խելացի են, բանիմաց: Ցանկացած խնդիր լուծվում է համերաշխության, սիրո և փոխադարձ հարգանքի մթնոլորտում: Դասարանում ունենք լավ սովորող աշակերտներ: Բոլորն էլ փորձում են կատարել առաջադրանքներն ըստ իրենց կարողության:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում են հետևյալ ուսումնադաստիարակչական աշխատանքները.

.Ուսումնադաստիարակչական որակը բարձր պահելու համար՝ խստորեն հետևել աշակերտների վարքին, ուսմանը, նրանց առաջադիմությանը:

.Ստեղծել փոխադարձ սիրո և հարգանքի մթնոլորտ՝ միմյանց և ուսուցիչների նկատմամբ:

.Աշակերտների մոտ զարգացնել՝ բարոյական, գեղագիտական, հայեցի դաստիարակությունը:

.Ամուր պահել՝ ուսուցիչ-ծնող-երեխա կապը:

.Կազմակերպել էքսկուրսիաներ:

2. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2.1 Հոգևոր դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել սեր՝ դեպի հոգևոր արժեքներ, հաճախակի կազմակերպել զրույցներ, ծանոթացնել հայ հոգևոր ժառանգությանը: Տալ քրիստոնեական և հոգևոր ճիշտ դաստիարակություն, այցելել հոգևոր մշակութային կենտրոններ:

2.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստարակության միջոցով, աշակերտների մեջ սերմանել, սերը դեպի գեղեցիկը; Զարգացնել նրանց գեղագիտական ճաշակն ու ընտրությունը: Որի գործում մեծ դեր են կատարում՝ այցը դեպի պատկերասրահներ, թատրոններ և մշակութային այլ հետաքրքրություն ներկայացնող վայրեր: Եվ ցույց տալ, թե ինչ կարևոր դեր ունի գեղեցիկը մեր կյանքում:

2.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Հայրենասիրական կրթության և դաստիարակության կազմակերպման գործում մեծ դեր ունեն զրույց- քննարկումները՝ հայրենասիրական թեմաների շուրջ: Որին պետք է մասնակից դարձնել նաև՝ ռազմագիտության ուսուցչին: Անհրաժեշտ է հիշել այն մեծանուն հերոսներին, որոնց կատարած սխրանքների շնորհիվ, այսօր ապրում և ստեղծագործում ենք անկախ երկրում: Պետք է նրանց մեջ սերմանել սեր դեպի հայրենիքը և հասցնել ազգային արժանապատվության բարձր գիտակցմանը:

2.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կազմակերպել զրույցներ՝ առողջ ապրելակերպի վերաբերյալ: Հետևողական լինել, որպեսզի աշակերտները հավուր պատշաճի ներկայանան և ճիշտ կազմակերպեն ֆիզիկական կուլտուրային հատկացված ժամերը: Եվ աշակերտների մեջ սերմանել հետաքրքրություն՝ մարմնամարզության, առողջ ապրելակերպի, սպորտի այլ բնագավառների նկատմամբ:

2.4 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ սերմանել սեր դեպի աշխատանքը: Զրույցների, օրինակների, քննարկումների միջոցով ներկայացնել, որ աշխատանքն է գեղեցկացնում մարդուն: Եվ, որ ծուլությամբ այս կյանքում ոչնչի չես կարող հասնել: Աշակերտների մոտ զարգացնել՝ աշխատասիրությունը և գիտակցության մեջ ձևավորել <<աշխատավոր մարդու>> կերպարը:

2.5 Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել սեր դեպի բնությունը: Որպեսզի նրանք խնամքով և ճիշտ վերաբերվեն իրենց շրջապատող աշխարհին:Բացատրել, որ մարդը բնության մի մասնիկն է: Եվ, որ պետք է խնայողաբար օգտագործել բնության բարիքները և չաղտոտել շրջակա միջավայրը: Որպեսզի չառաջանան էկոլոգիական և բնապահպանական հիմնախնդիրներ:

3. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Աշակերտը պետք է գիտակցի, որ դպրոցն իր համար հանդիսանում է <<երկրորդ տուն>>: Պետք է ամուր լինի դպրոց- ընտանիք կապը, որի հետևանքով ավելի արդյունավետ կլինի ուսումնական պրոցեսը: Աշակերտը պետք է գիտակցի նաև, որ ընտանիքը հանդիսանում է յուրաքանչյուր պետության հիմք և կորիզ: Եվ, որ նրանք են մեր վաղվա լավ ապագա կերտողները:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1-ին կիսամյակ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
	Զրույց ”Նոր ուսումնական տարվա” թեմայով		Դասղեկ,աշակերտներ
	Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները		Դասղեկ,աշակերտներ
	Զրույց ”Անկախության օրը ”թեմայով		Դասղեկ
	Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ մեր դասարանում		Դասղեկ
	Ուսուցիչ:Ով է նա		Դասղեկ,աշակերտներ
	Արշավ դեպի ”Պարզ լիճ”		Դասղեկ,աշակերտներ,ծնողներ
	Դպրոցական օրերի ուրախություններն ու դժվարությունները		Դասղեկ,աշակերտներ
	Զրույց ”Իմ իրավունքներն ու պարտականությունները”թեմայով		Դասղեկ,աշակերտներ
	Ինչ է պատասխանատվության զգացումը		Դասղեկ,աշակերտներ
	Իմ կարողություններն ու ձեռքբերումները		Դասղեկ,աշակերտներ
	Իմ երկիրը երեկ,այսօր,վաղը		Դասղեկ,աշակերտներ
	Զրույց ”Աշխատանքը բոլոր բարիքների աղբյուրն է ”թեմայով		Դասղեկ,աշակերտներ

	Զրույց ”Ընկերասիրության և հավատարմության մասին ”		Դասղեկ
	Բնական աղետներ:Զրույց ” 1988թ դեկտեմբերի 7-ի երկրաշարժի մասին”		Դասղեկ
	Ինչպես պայքարել անտարբերության դեմ		Դասղեկ
	Իմ կատարած լավ գործերը Կազմակերպչական հարցեր		Դասղեկ,աշակերտներ
	Նոր տարվա տոնահանդես		Դասղեկ,աշակերտներ

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման տեղը
01.09.2021թ.	<<Գիտելիքի օր>>	Դպրոցի բակ
11. 10.2021թ	Արշավ դեպի Պարզ լիճ	Դիլիջան-Պարզ լիճ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը	Անցկացվող միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
01.09	<<Ողջույն, իմ դպրոց>> զրույց	Կատարված է
08.09	<<Դպրոցի ներքին կարգապահական կանոնները>> զրույց	Կատարված է
15.09	<<Իմ անկախ Հայաստան>> զրույց, քննարկում	Կատարված է
22.09	<<Ճանաչենք մեր երկիրը>> էքսկուրսիա	
29.09	<<Վստահելի ուսուցիչ>> զրույց	
06.10	<<Հանդուրժողականություն>> զրույց	

13.10	<<Աշունն իմ քաղաքում>> զբոսանք	
20.10	<<Ինչ պես լինել լավ ընկեր>>քննարկում	
27.10	՝<<Ինչպես օգնել մարդկանց>>	
10.11	<<Փրկենք երկիր մոլորակը>>	
17.11	<<Իմ իրավունքներն ու պարտականությունները>> քննարկում	
24.11	<<Հավատարմություն>> ընթերցանություն, զրույց	
01.12	<<Ինչպես պաշտպանվել բնական աղետների ժամանակ>> զրույց	
08.12	<< Բարևելու կուլտուրա>>	
15.12	<<Ձմեռային ձյունառատ օր>> զբոսանք	
22.12	<< Եկեղեցին և ազգը>> քննարկում	
12.01	<<Նոր տարի, նոր հույսեր…>> քննարկում	
19.01	<<Առողջ հոգի առողջ մարմնում>> քննարկում	
26.01	<<Ես զինվորն եմ իմ երկրի>> զրույց, քննարկում	
02.02	<<Կոնֆլիկտ>> զրույց, ընթերցանություն	
09.02	<<Տեառնընդառաջ>> զրույց	
16.02	<<Գիրքն իմ բարեկամն է>> զրույց	
23.02	<<Ես ուզում եմ նմանվել…>>անավարտ նախադասություն, քննարկում	
02.03	<<Դռները բացե՛ք, գարուն է գալիս….>> ընթերցանություն, զրույց	
09.03	<<Իմ ծնողն իմ ընկերն է>>քննարկում	
16.03	Այցելություն Նոր Հաճնի Սբ. Ամենափրկիչ եկաղեցի-հանդիպել քահանային	
23.03	Հաղորդակցման միջոցները մեր կյանքում	
06.04	<<Շնորհավոր տոնդ, մայրի՛կ>> պատրաստել բացիկ	
13.04	<<Բարեկամներ և թշնամիներ>> զրույց	
20.04	<<Հայոց Ցեղասպանություն>> զրույց	
27.04	<<Համագործակցություն>> զրույց, ընթերցանություն	
04.05	<<Արցախյան Ազատամարտ>>զրույց	
11.05	<<Հետադարձ հայացք… >> զրույց	
18.05	<<Իմ արձակուրդին>>զրույց	
25.05	<<Ամառային էքսկուրսիա>> էքսկուրսիա բնության գրկում,	

Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը	Քննարկվող օրակարգի հարցերը	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
09.09.2022թ.	2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկում: Այլ հարցեր	.Ընտրվեցին՝ ծնողական խորհրդի նախագահ և անդամներ .Քննարկվեցին 2022-2023 ուս.տարվա կազմակերպչական հարցերը:	Կատարված է:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը	Քննարկվող հարցերը	Զրույցի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
05.09.2021թ.	Կոնֆլիկտային և խնդրահարույց իրավիճակների հաղթահարում:	Ծնողների հետ քննարկել, թե ինչպես աշակերտներին օգնել հաղթահարել կոնֆլիկտները և դժվար իրավիճակներում դրսևորել հարգանք և ընկերասիրություն իրար նկատմամբ:	Կատարված է:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Դասարանի ծնողական խորհրդի կազմը

	Ազգանուն, անուն, հայրանուն	**հասցե**	**հեռախոս**
Նախագահ	Լազարյան Սրբուհի	Կալինինի 4-րդ նրբ. 8ա	093142314
անդամներ	Տիգրանյան Շուշաննա	Կամո փող. 1-ին նրբ. տուն 15բ	093770410
անդամներ	Ասատրյան Տաթևիկ	Օրջոնիկիձե 7-րդ բն. 25	077649826
անդամներ	Հարությունյան Անահիտ	Կալինինի 4-րդ նրբ. տուն 4ա	098930514

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը	Քննարկվող հարցերը	Ծնողական խորհրդի նիստերի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն

15.09.2022թ.	Կազմակերպչական հարցեր	Կարգավորել դասասենյակը, հետևել դասարանի սանիտարահիգիենիկ վիճակին:	Կատարված է: